«Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերություն «ՀԿԵ» ՓԲԸ	Տեղեկատվություն երկաթուղային ցանցի վիճակի մասին	Ամսաթիվ _____ 2024թ.

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մշակվել է՝
Հայաստանի Հանրապետության երկաթուղային տրանսպորտի համակարգի ենթակառուցվածքի կառավարչի՝
- «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության կողմից

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Հիմնական հասկացություններ և սահմանումներ---------- 3-6

2. ԳԼՈՒԽ I . Ընդհանուր դրույթներ---------- 7-11

3. ԳԼՈՒԽ II. Երկաթուղային ենթակառուցվածքի հասանելիության տրամադրման պայմանները---------- 11-14

4. ԳԼՈՒԽ III. Փոխադրողների համար հասանելի երկաթուղային ենթակառուցվածքի տեսադաշտը---------- 15-18

5. ԳԼՈՒԽ IV. Երկաթուղային ենթակառուցվածքի թողունակության հատկացումը (Հզորությունների հատկացումը)---------- 18-21

6. ԳԼՈՒԽ V. Պայմանագրային ծառայություններ---------- 21-23

7. ԳԼՈՒԽ VI. Երկաթուղային ենթակառուցվածքի օգտագործման համար վճարը---------- 23-24

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Սույն Տեղեկատվությունում օգտագործվող հասկացությունները համապատասպանում են «Երկաթուղային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և 13.02.2008թ. կնքված Կոնցեսիոն պայմանագրում նշված կետերին:

Սույն Տեղեկատվությունում օգտագործվող սահմանումները կիրառելի են միայն սույն Տեղեկատվությամբ կարգավորվող հարաբերություններում:

Կիրառվող օրենսդրություն	Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտեր:
Լիազոր մարմին	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 06 հունիսի 2019թ. № 733-Ն որոշման):
Երկաթուղային ենթակառուցվածքի թողունակություն	Որոշակի տեսակի, հաճախականության, պարբերականության և ծավալի երկաթուղային փոխադրումների իրականացումն ապահովող երկաթուղային ենթակառուցվածքի տեխնիկական թողունակություն:
Հատուկ հայտ	Ընթացիկ տարվա համար տրամադրված թողունակության, թողունակության փոփոխման, փոխադրումների կամ կառավարման լրացուցիչ տրամադրման հայտ:
Առանցքային բեռնվածք	Երկաթուղային շարժակազմի մեկ առանցքին բաժին ընկնող քաշը (տոննաներով):
Երկաթուղային ենթակառուցվածքի նկատմամբ թույլտվության տրամադրման պայմանագիր	Երկաթուղային ենթակառուցվածքի նկատմամբ թույլտվությունը և փոխադրողներին լրացուցիչ ծառայությունների մատուցումը կանոնակարգող պայմանագիր
Գնացքների երթևեկության ժամանակացույց	Գնացքների երթևեկության կազմակերպման հիմք, որը միավորում է բոլոր ստորաբաժանումների գործունեությունը և արտահայտում է երկաթուղու շահագործման աշխատանքը: Գնացքների երթևեկության

	ժամանակացույցն ունի գործողության սահմանափակ ժամկետ:
Տեսակավորման կայարան	Կայարան, որի հիմնական նշանակությունը կայանում է վագոնների տեսակավորման և գնացքների ձևավորման պլանին համապատասխան դրանցից տարբեր դասի գնացքների ձևավորման, առանց վերամշակման տարանցիկ գնացքների բացթողման գործառնությունների կատարման, գնացքների կազմերի տեխնիկական սպասարկման և առևտրային զննության, լոկոմոտիվների և լոկոմոտիվային բրիգադների փոխարինման մեջ:
Սահմանափակումներ	Սահմանափակումները վերաբերում են երկաթուղային ենթակառուցվածքի սովորական օգտագործումից շեղումներին: Օրինակ՝ • արագության ժամանակային սահմանափակումներ • երկաթուղային երթևեկության պայմանները և դրանց նորմատիվային կարգավորումը • այս կամ այն ուղիների օգտագործման արգելք • սլաքային գծանցման օգտագործման արգելք • բեռնվածքի սահմանափակումներ • ուղևորների ընդունման ընթացիկ սահմանափակումներ • սահմանափակումներ՝ կապված շրջակա միջավայրի պաշտպանության հետ • փոխադրումների սահմանափակում • աղմուկի մակարդակի սահմանափակումներ Օրինակ՝ Փոխադրումների սահմանափակում. Ա սահմանափակող բնապահպանական թույլտվությանը համապատասխան, քլոր պարունակող առավելագույնը 10 վագոն կարող են փոխադրվել բնակելի գոտիով:
Գծի թեքություն	Երկաթուղային գծի երկայնակի պրոֆիլի տարր, որը ունի հորիզոնական գծի նկատմամբ թեքություն:
Երկաթուղային տրանսպորտի	Երկաթուղային շարժակազմի երթևեկության գործընթացի և

երթևեկության և շահագործման անվտանգություն	հենց երկաթուղային շարժակազմի պաշտպանվածության վիճակ, որի դեպքում բացակայում է քաղաքացիների կյանքին կամ առողջությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքին վնասի պատճառում առաջացնող տրանսպորտային պատահարների և դրանց հետևանքների առաջացման անթույլատրելի ռիսկը:
Երկաթուղու շահագործում	Երկաթուղու գործառույթների իրականացումն ապահովող գործունեություն, ներառյալ երկաթուղային ենթակառուցվածքի օգտագործում, պահպանում և շարժակազմի օգտագործում:
Երկաթուղային փոխադրումներ	Ուղևորների և բեռների երկաթուղային տրանսպորտով փոխադրման ծառայությունների մատուցում:
Փոխադրող	Իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը սույն օրենքով և փոխադրման պայմանագրով պարտավորվում է ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով փոխադրել ուղևորներ, առաքողի կողմից իրենց վստահված բեռ, ուղեբեռ, բեռնածանրոց՝ առաքման կետից մինչև նշանակման վայր, ինչպես նաև հանձնել բեռը, ուղեբեռը դրանց ստացման համար իրավասու անձին, և կատարում է նշված գործառույթները՝ օգտագործելով երկաթուղային շարժակազմը և այլ համապատասխան սարքեր:
Երկաթուղու տեխնիկական շահագործման կանոններ /ՏՇԿ/	Երկաթուղու տեխնիկական շահագործման հիմնական պահանջները կանոնակարգող գործող կանոններ:
Երկաթուղային ենթակառուցվածքի հասանելիության իրավունք	Ընդհանուր օգտագործման երկաթուղային ենթակառուցվածքի օգտագործման փոխադրողի իրավունք՝ երկաթուղային ենթակառուցվածքի կառավարչի հետ պայմանագիր կնքելուց հետո:
Հայաստանի Հանրապետության երկաթուղային համակարգ (երկաթուղի)	Տրանսպորտային համակարգ, որը որպես կազմակերպչական-տեխնիկական համալիր իր մեջ ներառում է.

երկաթուղային ենթակառուցվածքը,
շարժակազմը և դրա գործելու համար անհրաժեշտ շենքերը և շինությունները,
երկաթուղային փոխադրումներ իրականացնող անձանց և երկաթուղային ենթակառուցվածքի կառավարիչներին ու ուղևորների և բեռների անվտանգ փոխադրումը ապահովողներին:

ԳԼՈՒԽ I.

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Ներածություն

Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի վերաբերյալ սույն տեղեկատվությունը (այսուհետ՝ Տեղեկատվություն) մշակվել է «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության կողմից (այսուհետ՝ «ՀԿԵ» ՓԲԸ)՝ այն ծառայությունների նկարագրության համար, որոնք տրամադրվում են «ՀԿԵ» ՓԲԸ-ի կողմից կառավարվող երկաթուղային ենթակառուցվածքից օգտվելու (մուտք գործելու) համար:

Տեղեկատվությունը մատչելի և օգտակար տեղեկատու է հանդիսանում երկաթուղային տրանսպորտի ծառայություններից օգտվողների համար, որը նոր տեղեկատվություն ստանալիս յուրաքանչյուր տարի թարմացվում է ՝ Լիազոր մարմնի համաձայնությամբ:

«ՀԿԵ» ՓԲԸ-ն հանդիսանում է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) երկաթուղային ցանցի ենթակառուցվածքի կառավարիչը՝ Կոնցեսիոն պայմանագրի դրույթներին համապատասխան:

Իր գործունեության մեջ «ՀԿԵ» ՓԲԸ-ն, որպես երկաթուղային ենթակառուցվածքի կառավարիչ ղեկավարվում է հետևյալ սկզբունքներով՝

- ենթակառուցվածքի որակի, հուսալիության և մատչելիության ապահովում,
- ենթակառուցվածքի թողունակության արդար և ոչ խտրական բաշխում, ինչպես «ՀԿԵ» ՓԲԸ-ի, այնպես էլ այլ փոխադրողների, ինչպես նաև այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց օգտին,
- ենթակառուցվածքով երթևեկության կառավարում՝ կիրառելի օրենսդրության և այլ նորմատիվ ակտերին համապատասխան,
- երկաթուղային ենթակառուցվածքի անխափան, ռացիոնալ, հուսալի և անվտանգ գործունեության ապահովում,
- նշանակված գործառույթները կատարելու համար երկաթուղային ենթակառուցվածքի պատշաճ շահագործման վիճակում պահելը՝ անվտանգ և արդյունավետ օգտագործման հնարավորությամբ,
- թողունակության և երթևեկության կառավարման միջոցով երկաթուղային ճանապարհները և այլ հնարավորությունները երրորդ անձանց տրամադրության տակ հանձնելը,
- երկաթուղային փոխադրումների և կայարանների թողունակության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում՝ ՀՀ օրենսդրության և գործող նորմատիվ ակտերի համաձայն,
- երկաթուղային ենթակառուցվածքի շահագործման և կառավարման հետ կապված ռիսկերի վերլուծություն և հնարավոր ռիսկերի նկատմամբ հուսալի հսկողություն սահմանելու համար նախազգուշության համապատասխան միջոցների ձեռնարկումը,
- Փոխադրողների հետ գործընկերության շրջանակներում բեռների և ուղևորների փոխադրման շուրջ գոյություն ունեցող և առաջացող խնդիրների հայտնաբերման և լուծման ուղղությամբ համագործակցություն:

1.2 Նպատակը

Տեղեկատվության նպատակն է՝ երկաթուղային տրանսպորտի ծառայություններից օգտվողներին, այդ թվում՝ Փոխադրողներին երկաթուղային ենթակառուցվածքի նկատմամբ թույլտվության, օգտագործման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում:

Ենթակառուցվածքի կառավարիչը նախապես համաձայնեցնում է տեղեկատվությունը լիազոր մարմնի հետ, այնուհետև հրապարակում է այն և կիրառում է իր գործունեության ընթացքում:

Տեղեկատվությունը ներառում է ենթակառուցվածքի օգտագործման ռեժիմի բնութագիրը, այդ թվում ենթակառուցվածքի օգտագործման պայմանները՝ լիազոր անձին տրամադրված լիցենզիային համապատասխան, բեռնման-բեռնաթափման հիմնական կետերի միջև փոխադրման տևողությունը (առավելագույն և նվազագույն ժամկետները), ռազմավարական նշանակություն ունեցող ապրանքների բեռնափոխադրումների առավելագույն սակագները և ՀՀ Կառավարության կողմից սահմանված այլ տեղեկատվություն:

Տեղեկատվությունը վերաբերում է «ՀԿԵ» ՓԲԸ-ի կառավարման տակ գտնվող երկաթուղային ենթակառուցվածքին և իր մեջ ներառում է մանրամասն ընդհանուր կանոնները, սահմանային ժամկետները, վճարների գանձման, ծառայությունների մատուցման սակագների և երկաթուղային ենթակառուցվածքի թողունակության տրամադրման համակարգին առնչվող կարգը ու չափանիշները:

Տեղեկատվությունն իր մեջ ներառում է նաև թողունակության տրամադրման հայտի ներկայացման համար անհրաժեշտ տեղեկատվությունը:

Տեղեկատվությունը հանդիսանում է Փոխադրողների համար անհրաժեշտ տեղեկատվության հիմնական աղբյուրը՝ «ՀԿԵ» ՓԲԸ-ի երկաթուղային ցանցում տրանսպորտային ծառայություններ մատուցելու համար: Այն, ինչպես պարբերական գործունեություն իրականացնող, այնպես էլ ապագայում գործունեություն պլանավորող Փոխադրողների համար ծառայում է որպես հեշտացված (պարզեցված) մուտքի թույլտվության վերաբերյալ տեղեկատվության լայն սպեկտրի տրամադրման միջոց:

Տեղեկատվությունն իր մեջ ներառում է գնացքների երթևեկության մեկ տարվա ժամանակացույցի գործողության ժամկետի վերաբերյալ ինֆորմացիա: Եթե երկաթուղային ցանցում կամ դրա օգտագործման պայմաններում տեղի են ունենում փոփոխություններ, ապա համապատասխան փոփոխությունները կատարվում են նաև Տեղեկատվության մեջ:

1.3. Իրավական դաշտ

Տեղեկատվության պատրաստման օրենսդրական հիմքն են հանդիսանում՝ «Երկաթուղային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 19.03.2009 թվականի թիվ 279-Ն որոշումը, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 28.09.2009 թվականի թիվ 536-Ա հրամանը, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 24.12.2008 թվականի «ՀԿԵ» ՓԲԸ-ի ենթակառուցվածքի օգտագործման համար վճարի սահմանման և վերանայման կարգը հաստատելու մասին» թիվ 731-Ա որոշումը (17.04.2013 թվականի փոփոխություններով), ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող

հանձնաժողովի 05.12.2012 թվականի «ՀԿԵ» ՓԲԸ-ի ենթակառուցվածքի օգտագործման համար վճարի հաշվարկման մեթոդիկան հաստատելու մասին» թիվ 501-Ա որոշումը:

Տեղեկատվությունը կազմելիս ուշադրության են արժանացել միայն այն նորմերը, որոնք պաշտոնապես հրապարակվել և ուժի մեջ են մտել սույն Տեղեկատվության հրապարակման ամսաթվին:

Տեղեկատվություն կազմելիս ուշադրության չեն արժանացել մշակման փուլում գտնվող օրենսդրական ակտերը և նորմերը:

1.4. Իրավական կարգավիճակը

«ՀԿԵ» ՓԲԸ-ն հանդիսանում է առևտրային ընկերություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան: Իր գործունեության մեջ «ՀԿԵ» ՓԲԸ-ն ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ վավերացված միջազգային պայմանագրերով, ՀՀ գործող օրենսդրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքով, «Երկաթուղային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության որոշումներով, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամաններով, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումներով և ՀՀ այլ իրավական ակտերով:

«Երկաթուղային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի նորմերի հիման վրա, ՀՀ մրցույթի արդյունքներով, ի դեմս ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության, ՀՀ կնքել է «ՀԿԵ» ՓԲԸ-ի հետ Հայաստանի Հանրապետության երկաթուղային տրանսպորտի համակարգի՝ «Ռուսական երկաթուղիներ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ «ՌԵ» ԲԲԸ-ն) կողմից ստեղծված «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությանը փոխանցելու մասին կոնցեսիոն պայմանագիրը: Կոնցեսիոն պայմանագրին համապատասխան «ՀԿԵ» ՓԲԸ-ն իրավունք է ստացել կառավարել ՀՀ երկաթուղային տրանսպորտի համակարգը:

Տեղեկատվությունը հանդիսանում է Փոխադրողների համար ենթակառուցվածքի վերաբերյալ տվյալների աղբյուր, և չի հանդիսանում պարտադիր, եթե երկաթուղային ենթակառուցվածքի նկատմամբ թույլտվության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Տեղեկատվության մեջ թվարկվում են ինչպես «ՀԿԵ» ՓԲԸ-ի, այնպես էլ Փոխադրողների իրավունքներն ու պարտականությունները: Փոխադրողները և «ՀԿԵ» ՓԲԸ-ն պայմանագրային հիմունքներով սահմանում են իրավունքներ և պարտականություններ և ամրագրում են դրանք երկաթուղային ենթակառուցվածքի նկատմամբ թույլտվություն տրամադրելու մասին պայմանագրում: Բացի դրանից, կիրառվում են հանրային իրավունքի նորմերից բխող իրավունքներ և պարտականություններ:

2024 թվականի Երթևեկության ժամանակացույցում «ՀԿԵ» ՓԲԸ թողունակության հայտ ներկայացրած փոխադրողները, դրանով իսկ պարտավորվում են պահպանել 2024 թվականի Տեղեկատվության մեջ նշված հայտի մշակման ընթացակարգը:

Տեղեկատվության հրապարակումը նշանակում է, որ «ՀԿԵ» ՓԲԸ-ն 2024 թվականին ընդունում է իր պարտավորություններն այն տեսքով, որով դրանք նկարագրված են սույն Տեղեկատվության մեջ:

1.5. Բողոքարկման ընթացակարգերը

Սույն տեղեկատվության նկատմամբ պահանջները և վեճերը կարող են ներկայացվել «ՀԿԵ» ՓԲԸ քննարկման՝ Կոնցեսիոն պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված վեճերի լուծման վերաբերյալ դրույթներին համապատասխան:

Պահանջները և վեճերը քննարկվում են ՀՀ գործող օրենսդրության և պահանջների և միջազգային իրավական ակտերում նախատեսված վեճերի լուծման կարգին համապատասխան և այն տեսքով, որով դրանք ներառված են Տեղեկատվության մեջ:

«Երկաթուղային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ շահագրգիռ անձինք իրավունք ունեն ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողով ուղարկել գրավոր հարցումներ «ՀԿԵ» ՓԲԸ-ի գործունեության վերաբերյալ, ներառյալ այն դեպքերի, երբ կիրառվում են վեճերի և պահանջների կարգավորման կանոնները: Բոլոր Փոխադրողները, ինչպես նաև բոլոր այլ շահագրգիռ անձինք իրավունք ունեն դիմել ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողով՝ իրենց նկատմամբ ոչ բարեխիղճ կամ խտրական վերաբերմունքի կամ այլ կերպ վնաս պատճառելու վերաբերյալ «ՀԿԵ» ՓԲԸ-ի գործունեության քննության խնդրանքով:

1.6. Գործողության (վավերականության) ժամկետը

Տեղեկատվությունը ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից և գործում է մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը: Եթե համապատասխան փոփոխություններ չկան, գործողության ժամանակաշրջանը երկարաձգվում է մինչև հաջորդ տարբերակի հրապարակումը «ՀԿԵ» ՓԲԸ-ի ներկայացմամբ և Լիազոր մարմնի համաձայնությամբ:

«ՀԿԵ» ՓԲԸ-ն կարող է յուրաքանչյուր տարի լրացումներ և փոփոխություններ մտցնել Տեղեկատվության մեջ՝ Լիազոր մարմնի հետ լրացուցիչ տվյալների ցանկը կամ գոյություն ունեցող տեղեկատվության մեջ կատարված փոփոխությունները համաձայնեցնելուց հետո:

1.7. Հրապարակումը և տարածումը

Տեղեկատվության հայերեն և ռուսերեն տարբերակները անվճար հասանելի են «ՀԿԵ» ՓԲԸ-ի վեբ կայքում:

Ըստ ցանկության այն կարող է տրամադրվել թվային կրիչի (կոմպակտ-սկավառակի) վրա կամ տպագրված տեսքով:

Տեղեկատվության հայերեն և ռուսերեն տարբերակների միջև հակասությունների դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տարբերակին:

1.8. Կոնտակտային տեղեկատվություն

Տեղեկատվության և երկաթուղային ենթակառուցվածքի հասանելիության տրամադրման ընթացակարգի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար անհրաժեշտ է դիմել հետևյալ հասցեով՝

Փոստային հասցե՝	Հայաստանի Հանրապետություն 0005, ք.Երևան, Տիգրան Մեծի պողոտա 50 «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերություն
E-mail:	mail@railway.am
Web-site:	www.railway.am

Պաշտոնական հեռախոսահամարներ՝

Հեռ. (+37410) 52 04 28, ֆաքս (+37410) 57 36 30

Ֆիրմային տրանսպորտային սպասարկման ճանապարհային կենտրոն, տրանսպորտային ծառայությունների կենտրոն՝
Հեռ. (+37410) 57 27 22

Այլ կոնտակտային հասցեները տրամադրվում են երկաթուղային ենթակառուցվածքի հասանելիության մասին պայմանագրի պատրաստման շրջանակներում:

ԳԼՈՒԽ II.

2. Երկաթուղային ենթակառուցվածքի հասանելիության տրամադրման պայմանները

2.1. Օրենսդրական հիմք

«ՀԿԵ» ՓԲԸ-ի երկաթուղային ցանցի ենթակառուցվածքի հասանելիությունը տրամադրվում է համապատասխան՝

- ՀՀ քաղաքացիական օրենսգրքի,
- «Երկաթուղային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի,
- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 24.12.2008 թվականի «ՀԿԵ» ՓԲԸ-ի ենթակառուցվածքի օգտագործման համար վճարի սահմանման և վերանայման կարգը հաստատելու մասին» թիվ 731-Ա որոշման (17.04.2013 թվականի փոփոխություններով),
- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 05.12.2012 թվականի «ՀԿԵ» ՓԲԸ-ի ենթակառուցվածքի օգտագործման համար վճարի հաշվարկման մեթոդիկան հաստատելու մասին» թիվ 501-Ա որոշման,
- Հայաստանի Հանրապետության, «ՀԿԵ» ՓԲԸ-ի և «ՌԵ» ԲԲԸ-ի միջև 13.02.2008 թվականի կնքված Կոնցեսիոն պայմանագրին,

- «ՀԿԵ» ՓԲԸ-ի սակագնային քաղաքականության (Հավելված 11):

2.2. Երկաթուղային ենթակառուցվածքի օգտագործման վերաբերյալ պայմանները

«ՀԿԵ» ՓԲԸ երկաթուղային ցանցի հասանելիություն ստանալու համար, Փոխադրողը պարտավոր է ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օգտագործման մասին հայտի հետ ներկայացնել՝

1. ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից տրված իրավաբանական անձանց գրանցման վկայականի և կանոնադրության պատճեն,
2. Հարկ վճարողի նույնականացման համարի պատճեն,
3. Երկաթուղային տրանսպորտի գործունեության կազմակերպման լիցենզիայի պատճեն,
4. Փոխադրումների իրականացման համար երկաթուղային լոկոմոտիվների և այլ շարժակազմի սեփականության կամ այլ իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները,
5. ՀՀ օրենսդրությանը համաձայն՝ աշխատողների համապատասխան որակավորումը հաստատող փաստաթղթերի պատճենները:

Երկաթուղային տրանսպորտի ոլորտում գործունեության լիցենզավորումն իրականացվում է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Լիցենզավորման համար պատասխանատու մարմինը հանդիսանում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը:

Ենթակառուցվածքի կառավարիչը, Փոխադրողները և փոխադրման գործընթացի հետ կապված այլ մասնակիցները, ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված իրենց լիազորությունների շրջանակներում ապահովում են՝

- գնացքների, ուղևորների, բեռների անվտանգ երթևեկության պայմանները,
- բեռների, ուղեբեռների, բեռնային ծանրոցների փոխադրման անվտանգությունը, պահպանվածությունը և ժամկետները,
- երկաթուղային տրանսպորտի շահագործման և երթևեկության անվտանգությունը,
- ՀՀ բնապահպանական օրենսդրության պահանջների կատարումը:

Երկաթուղային տրանսպորտի անվտանգության ապահովման և երկաթուղային տրանսպորտի անվտանգության մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը՝ 28.11.2007 թվականի ընդունված «Երկաթուղային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջների համաձայն:

Փոխադրողը պարտավոր է՝

- ունենալ երկաթուղային տրանսպորտի կազմակերպման լիցենզիա,
- սեփականության կամ այլ իրավունքով ունենալ տեխնիկապես սարքին երկաթուղային լոկոմոտիվներ և այլ շարժակազմ՝ փոխադրումներ իրականացնելու համար,
- ունենալ ՀՀ օրենսդրությանը համապատասխան որակավորմամբ աշխատողներ,
- կնքել երկաթուղային ենթակառուցվածքի հասանելիության տրամադրման մասին համապատասխան պայմանագիր (տիպային պայմանագրի ձևը բերված է Հավելված 1-ում):

Նշված պայմանագրի կարևորագույն պայմաններն են հանդիսանում գնացքների երթևեկության կազմակերպումը, շարժակազմի օգտագործման կարգավորումը, երկաթուղային շարժակազմի տեխնիկական սպասարկման և շահագործման կարգի սահմանումը, այն պարտականությունների կատարման համար կողմերի պատասխանատվությունը, որոնք առաջանում են երկաթուղային տրանսպորտով փոխադրումներ իրականացնելիս:

«ՀԿԵ» ՓԲԸ-ն տրամադրում է երկաթուղային ենթակառուցվածքի հասանելիությունը Փոխադրողներին առանց խտրականության և նրանց կողմից ներկայացվող հայտերի հիման վրա (Հայտի օրինակելի ձևը բերված է Հավելված 2-ում):

Փոխադրումների իրականացման համար երկաթուղային ենթակառուցվածքից օգտվելու իրավունքը վերապահվում է այն Փոխադրողներին, որոնք ունեն՝

- երկաթուղային տրանսպորտի գործունեության կազմակերպման գործող լիցենզիա,
- փոխադրումների իրականացման հետ կապված ռիսկից գործող ապահովագրություն,
- «ՀԿԵ» ՓԲԸ-ի հետ կնքված երկաթուղային ենթակառուցվածքի հասանելիության տրամադրման մասին պայմանագիր:

2.2.1. Երկաթուղային ենթակառուցվածքի հասանելիության տրամադրման մասին պայմանագիր

Երկաթուղային ենթակառուցվածքի հասանելիության տրամադրման մասին պայմանագիրը (այսուհետ՝ Հասանելիության տրամադրման պայմանագիր) պետք է կնքվի «ՀԿԵ» ՓԲԸ-ի և Փոխադրողների միջև և ներառի հետևյալ նվազագույն պահանջները՝

ա) Փոխադրողին մատուցվող ծառայությունները հետևյալն են՝

- ծառայությունների նվազագույն փաթեթ,
- երկաթուղային ցանցի սահմաններում ենթակառուցվածքի սպասարկման և մատուցվող ծառայությունների հասանելիություն,
- լրացուցիչ ծառայություններ

բ) Երթևեկության անվտանգության ոլորտի նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ կողմերի պարտավորությունները,

գ) պայմանագրում վերապահված ծառայությունների որակի ապահովման և գնացքների կազմերի շահագործման, ճշգրտության բնութագրերը, այդ թվում կողմերից յուրաքանչյուրի պատասխանատվությունը,

դ) հասանելիության ապահովման, պայմանագրում ներառված ծառայությունների դիմաց վճարման առավելագույն մակարդակը,

ե) ապահովագրության պարտավորությունը և պատասխանատվությունը վնասի համար,

զ) պայմանագրի գործողության ժամկետը և դադարեցման պայմանները:

Պայմանագիրը նախատեսում է նաև երկաթուղային ենթակառուցվածքի թողունակության տրամադրման մասով «ՀԿԵ» ՓԲԸ-ի և Փոխադրողների իրավունքներն ու պարտականությունները:

2.3. Տեխնիկական շահագործման կանոնները

Փոխադրողները, ինչպես նաև երկաթուղու գործունեության կազմակերպման մեջ ներգրավված այլ իրավաբանական և ֆիզիկական անձինք պարտավոր են ապահովել

Երկաթուղու տեխնիկական շահագործման կանոնների պահպանումը և երաշխավորել երթևեկության անվտանգությունը:

Երկաթուղու տեխնիկական շահագործման կանոնները հաստատված են ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 15.03.2004 թվականի թիվ 67-Ն հրամանով և գրանցված են ՀՀ արդարադատության նախարարության կողմից 24.03.2004 թվականին:

2.4. Հատուկ փոխադրումներ /վտանգավոր ապրանքների տեսականի

«Երկաթուղային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի 30-րդ կետի համաձայն՝ վտանգավոր բեռ է հանդիսանում՝ բեռ, ուղեբեռ, բեռնածանրոց, որոնք իրենց քիմիական, կենսաբանական, ռադիոակտիվ կամ այլ հատկությունների պատճառով փոխադրման, մանևրային, բեռնման-բեռնաթափման և պահպանման ժամանակ կարող են դառնալ պայթյունի, հրդեհի, քիմիական կամ այլ տիպի վարակի պատճառ, կամ վնաս հասցնել տեխնիկական միջոցներին, սարքերին, սարքավորումներին և երկաթուղային տրանսպորտի այլ օբյեկտներին, երրորդ անձանց, ինչպես նաև քաղաքացիների կյանքին կամ առողջությանը, շրջակա միջավայրին:

«Երկաթուղային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի 31-րդ կետով՝ հատուկ երկաթուղային փոխադրումներ են հանդիսանում երկաթուղային փոխադրումները, որոնք նախատեսված են հատուկ պետական և պաշտպանական կարիքների համար, ինչպես նաև դատապարտյալների և կալանավորների երկաթուղային փոխադրումներ:

Հատուկ և վտանգավոր բեռների փոխադրման, բեռնման և բեռնաթափման ժամանակ բեռն առաքողները և բեռ ստացողները պետք է ապահովեն այդ փոխադրումների, բեռնման և բեռնաթափման անվտանգությունը համաձայն «Երկաթուղային տրանսպորտով փոխադրվող վտանգավոր բեռների ցանկը և դրանց փոխադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 30.07.2009 թվականի թիվ 892-Ն որոշման, ինչպես նաև ունենալ վթարային իրավիճակների և դրանց հետևանքների կանխարգելման համար նախատեսված համապատասխան միջոցներ: Ենթակառուցվածքի կառավարիչը և Փոխադրողները, իրենց տեխնիկական և տեխնոլոգիական հնարավորությունների շրջանակներում, առկա վերականգնողական և հակահրդեհային միջոցների կիրառմամբ, պարտավոր են մասնակցել տրանսպորտային պատահարների հետևանքների վերացմանը:

Էկոլոգիական, հրդեհային անվտանգության, ինչպես նաև ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտում բնակչության սանիտարա-համաճարակային անվտանգության ապահովումն իրականացվում է ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

Հատուկ և վտանգավոր բեռների փոխադրման կարգի պահպանման համար պատասխանատվությունը դրվում է «ՀԿԵ» ՓԲԸ-ի և Փոխադրողների վրա:

ԳԼՈՒԽ III.

3. Փոխադրողների համար հասանելի երկաթուղային ենթակառուցվածքի տեսադաշտը

3.1. Երկաթուղային ցանցի տարածումը

Հայաստանի Հանրապետության երկաթգծերը հատվում են հետևյալ սահմաններում՝
- դեպի արևելք Իջևան կայարան (Ադրբեջանի հետ սահման),
- դեպի հարավ՝ Երասխ կայարան (Ադրբեջանի հետ սահման),
- դեպի հյուսիս՝ Այրում կայարան (Վրաստանի հետ սահման),
- դեպի արևմուտք՝ Ախուրյան կայարան (Թուրքիայի հետ սահման):

Երկաթուղային ցանցի քարտեզը ներկայացված է Հավելված 3-ում:

Չշահագործվող գծերը՝
- կ. Երասխ - Պետական սահման Ադրբեջանի հետ,
- կ. Արթիկ – կ. Մարալիկ,
- կ.Գյումրի – կ. Ախուրյան -Պետական սահման Թուրքիայի հետ,
- կ.Արմավիր –կ. Արշալույս,
- կ. Կաքավաձոր – կ. Իջևան -Պետական սահման Ադրբեջանի հետ:

3.2. Ցանցի բնութագիրը

- **երկաթուղային գծերի լայնքը՝** 1520 մմ:
- կայարաններ և հանգույցներ՝ «ՀԿԵ» ՓԲԸ-ի շահագործվող կայարանների քանակն է՝ 55, հանգուցային կայարաններ չկան: Կայարանների ամբողջական ցանկն տրված է Հավելված 12-ում:
- **բեռնման ուղիներ՝** Բեռնային (բեռնման և բեռնաթափման) գործառնությունների իրականացման համար բաց կայարանների ցանկը նշված է «ՀԿԵ» ՓԲԸ-ի Սակագնային քաղաքականությունում: Մանրամասն տեղեկատվությունը տրամադրվում է հարցման հիման վրա:
- **քաշի սահմանափակումները՝** Բեռնատար գնացքների քաշի և պայմանական երկարության նորմերը սահմանված են «ՀԿԵ» ՓԲԸ-ի կողմից և ներկայացված են թիվ 4 Հավելվածում: Բեռնատար վագոնների առանցքային բեռնվածության հետ կապված՝ Երկաթուղու տեխնիկական շահագործման Կանոններով կանոնակարգվող սահմանափակումների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը տրամադրվում է հարցման հիման վրա»:
- **երկաթուղային գծերի թեքությունները** կազմում են մինչև 0,040:
- **ուղևորատար գնացքների երթևեկության առավելագույն արագությունը՝** 100 կմ/ժ, նվազագույնը՝ 40 կմ/ժ:
- **բեռնատար գնացքների երթևեկության առավելագույն արագությունը՝** 70 կմ/ժ, նվազագույնը՝ 25 կմ/ժ:
- **գնացքների առավելագույն երկարությունը՝** բեռնատար գնացքների՝ 690 մ: Ուղևորատար գնացքների համար՝ 450 մ:

- Երկաթուղային գծերը սարքավորված են **հպակային ցանցով**՝ 3.3 կՎ լարմամբ հաստատուն հոսանքով քարշային էներգամատակարարման համար:
- **ազդանշանային և հաղորդակցության համակարգեր**
- 48 կայարաններում գնացքների երթևեկության և մաննրային աշխատանքների կառավարումն իրականացվում է սլաքների և ազդանշանների էլեկտրական կենտրոնացման համակարգի, իսկ վագուրդիներում՝ կիսաավտոմատ ուղեփակման համակարգերի և հեռախոսային կապի միջոցներով,
- ամբողջ երկաթուղու տարածքում ծառայողական խոսակցությունների վարումն իրականացվում է օպերատիվ - տեխնոլոգիական հեռախոսակապի ցանցի միջոցով,
- երկաթուղային կայարաններում և վագուրդիներում շարժակազմերի ու երկաթուղային ինքնագնաց շարժական միավորների մեքենավարների և կայարանների աշխատակիցների միջև ծառայողական խոսակցություններն իրականացվում են գնացքային և մաննրային ռադիոկապի միջոցով՝ երկաթուղու տիպային ռադիոկայանների օգտագործմամբ:

3.3. Երթևեկության սահմանափակումները

Շրջակա միջավայրի հետ կապված սահմանափակումներ և կարգագրեր՝

• «ՀԿԵ» ՓԲԸ-ն պարտավոր է կատարել ՀՀ օրենսդրությամբ սահմանված բնապահպանական պահանջները,

• «ՀԿԵ» ՓԲԸ-ն պատասխանատվություն չի կրում որևէ Կոնցեսիոն ակտիվի մասով շրջակա միջավայրին պատճառած վնասի համար, որի աղբյուրը կամ պատճառը հանդիսացել են մինչև Կոնցեսիոն գործունեության սկիզբը տեղի ունեցած գործողությունները կամ բացթողումները:

Ստորագրելով երկաթուղային ենթակառուցվածքի հասանելիության տրամադրման մասին պայմանագիրը, Փոխադրողը պարտավորվում է կատարել ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան, ՀՀ բնապահպանական նորմերի պահանջները:

Բնապահպանական նորմերի պահանջների կատարման հետ կապված բնապահպանական մարնինների թույլտվությունները կարող են վերաբերել՝

• վտանգավոր բեռով վագոնների, այդ թվում բեռնված վագոն-գլանատակառների կամ բեռնարկղ-գլանատակառների շահագործմանը (այդ թվում և կայանմանը),

• այն գործողությունների կատարմանը, որոնք կարող են առաջացնել բարձր ձայնային ճնշում շրջակա միջավայրում,

• հողի աղտոտման կանխարգելմանը:

Երկաթուղային ենթակառուցվածքի հասանելիության տրամադրման վերաբերյալ իրենց հայտերում Փոխադրողները պետք է ներառեն այն գործողությունների բնույթի վերաբերյալ տեղեկատվություն, որոնց համար նրանք թույլտվություն են հայցում, այնքանով, որքանով այդ գործողություններն առնչվում են բնապահպանական մարմինների կողմից տրված թույլտվության հետ:

Աղմուկի ազդեցության հսկումը

Երկաթուղային տրանսպորտի երթևեկությունը կարող է հանդիսանալ միջավայրի վրա աղմուկի ազդեցության աղբյուր: Դրա համար էլ, երկաթուղային տրանսպորտում աղմուկի ազդեցության նվազեցման նպատակով, «ՀԿԵ» ՓԲԸ-ն ձեռնարկում է համապատասխան միջոցառումներ: Նման միջոցառումների ձեռնարկման համար հիմք են ծառայում միջավայրի վրա աղմուկի ազդեցության վերաբերյալ համապատասխան նորմատիվ իրավական ակտերը:

Թողունակության հզորությունները տեղաբաշխելիս, «ՀԿԵ» ՓԲԸ-ն հաշվի է առնում երկաթուղային տրանսպորտի երթևեկության՝ միջավայրի վրա աղմուկի ազդեցության վերաբերյալ նորմատիվ իրավական ակտերի պահանջները, և, անհրաժեշտության դեպքում բաշխում է թողունակության հզորություններն այնպես, որպեսզի չգերազանցվեն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված սահմանային նշանակությունները:

Ռիսկի հետ կապված սահմանափակումները

Բեռնման-բեռնաթափման աշխատանքները և վտանգավոր բեռ պարունակող վագոնների փոխադրումը, ռիսկ են կրում շրջակա միջավայրի համար: Տվյալ ռիսկը վերահսկելու համար, «ՀԿԵ» ՓԲԸ-ն խստորեն ղեկավարվում է «Երկաթուղային տրանսպորտով փոխադրվող վտանգավոր բեռների ցանկը և դրանց փոխադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 30.07.2009 թվականի թիվ 892-Ն որոշման պահանջներով:

Փոխադրման գործընթացը, վագոնների հետ գործողությունները և վտանգավոր բեռների բեռնման-բեռնաթափման գործառնություններ կատարող կայարանները բերված են Հավելված 5-ում:

Երկաթուղային թունելներով տրանսպորտի երթևեկության հետ կապված հատուկ սահմանափակումները բացակայում են:

Երկաթուղային կամուրջներով տրանսպորտի երթևեկության հետ կապված հատուկ սահմանափակումները բացակայում են:

Առանցքի վրա բեռնվածության ընդհանուր քաշային սահմանափակումն է 23 տ:

3.4. Ենթակառուցվածքի հասանելիությունը

Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օգտագործման ծառայությունների մատուցման կանոնները ներկայացված են թիվ 6 Հավելվածում:

3.5. Տերմինալներ

Բոլոր տերմինալների գտնվելու վայրի, ուղևորների փոխադրման և բեռների փոխաբեռնման համար նախատեսված հարթակների բարձրության մասին տեղեկատվությունը տրամադրվում է ըստ հարցման:

3.6. Սպասարկման հնարավորությունները

Փոխադրումների հետ կապված ծառայությունները տրամադրվում են կայարաններում, ընդհանուր օգտագործման վայրերում կամ սեփական մերձատար ուղիներում:

Սպասարկման հնարավորությունները ներկայացված են թիվ 7 Հավելվածում:

«ՀԿԵ» ՓԲԸ-ում բեռնատար գնացքները ձևավորվում են համաձայն գնացքների ձևավորման պլանի, որը ներկայացված է թիվ 8 Հավելվածում:

Լոկոմոտիվների և վագոնների սպասարկման կետերը ներկայացված են ըստ թիվ 9 Հավելվածի սխեմայի:

Մանևրային աշխատանքները շահագործվող բեռնատար կայարաններում իրականացվում են ՉՄԷ-3 սերիայի ջերմաքարշերով: Ոչ ընդհանուր օգտագործման մերձատար ուղիներ վագոնների մատուցումն ու հավաքումն իրականացվում է համաձայն «Կայարաններին հարակից ոչ ընդհանուր օգտագործման մերձատար ուղիներում երթևեկության կազմակերպման և սպասարկման կարգի մասին հրահանգի» և մերձատար ուղու սեփականատիրոջ հետ պայմանագրի:

Ջերմաքարշերի լիցքավորումը դիզելային վառելիքով իրականացվում է լոկոմոտիվային դեպոներում՝ Երևան, Գյումրի և Սանահին կայարաններում:

ԳԼՈՒԽ IV.

4. Երկաթուղային ենթակառուցվածքի թողունակության հատկացումը (Հզորությունների հատկացումը)

4.1. Երկաթուղային ենթակառուցվածքի թողունակության նկատմամբ օգտագործման իրավունքները

«ՀԿԵ» ՓԲԸ-ն Փոխադրողներին հատկացնում է երկաթուղային ենթակառուցվածքի առկա համապատասխան թողունակություն:

Փոխադրողներն իրավունք չունեն իրար մեջ կատարել հատկացված երկաթուղային ենթակառուցվածքի նկատմամբ գործարքներ, այլապես, հասանելիության տրամադրման վերաբերյալ համապատասխան պայմանագիրը կհամարվի առոչինչ:

Երկաթուղային ենթակառուցվածքի թողունակության նկատմամբ օգտագործման իրավունքը Փոխադրողներին կարող է տրամադրվել առավելագույնը գնացքների երթևեկության ժամանակացույցի գործողության մեկ ժամկետով:

«ՀԿԵ» ՓԲԸ-ն Փոխադրողի հետ կարող է կնքել գնացքների երթևեկության ժամանակացույցի գործողության մեկ ժամկետից ավել ժամկետով ենթակառուցվածքի որոշակի թողունակության օգտագործման վերաբերյալ համաձայնագիր:

«ՀԿԵ» ՓԲԸ-ի և համապատասխան Փոխադրողի իրավունքներն ու պարտականությունները բացթողումային հնարավորության հատկացման նկատմամբ սահմանվում են հասանելիության տրամադրման մասին համապատասխան պայմանագրով:

4.2. Երկաթուղային ենթակառուցվածքի թողունակության բաշխման կարգը

Երկաթուղային ենթակառուցվածքի թողունակությունը բաշխվում է «ՀԿԵ» ՓԲԸ-ին ներկայացված՝ ընդհանուր օգտագործման համապատասխան երկաթուղային ենթակառուցվածքի օգտագործմամբ փոխադրումների իրականացման հայտերի հիման վրա:

Հայտի օրինակելի ձևը ներկայացված է Հավելված 9-ում:

Հայտերը քննարկվում են երկաթուղային ենթակառուցվածքի հասանելի և արդեն բաշխված թողունակությունը, ինչպես նաև սահմանված գերակայությունները հաշվի առնելով:

Երկաթուղային ենթակառուցվածքի թողունակությունը բաշխելիս, «ՀԿԵ» ՓԲԸ-ն ղեկավարվում է հետևյալ սկզբունքներով և հերթականությամբ՝

- ուղևորատար գնացքներ,
- ըստ ժամանակացույցի շարժվող բեռնատար գնացքներ,
- օղակաձև երթուղիների բեռնատար գնացքներ,
- ըստ վագոնների կուտակման ուղարկվող բեռնատար գնացքներ:

2024 թվականի գնացքների երթևեկության ժամանակացույցում ենթակառուցվածքի թողունակության հատկացման հայտերը կարելի է ներկայացնել «ՀԿԵ» ՓԲԸ ոչ ուշ, քան փոխադրումն իրականացնելուց մեկ ամիս առաջ՝ «ՀԿԵ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի անունով:

Հայտը ներկայացվում է գնացքների երթևեկության պահանջվող ուղղությունների մասնագրի (спецификация) տեսքով: «ՀԿԵ» ՓԲԸ-ն կսահմանի հզորությունների առաջարկված բաշխումը 2024 թվականի երթևեկության ժամանակացույցում, եթե հայտատուների հետ այլ ամսաթիվ չվերապահվի:

Նախատեսվում է, որ հզորությունների բաշխումը կլինի միանգամյա ամբողջ տարվա ժամանակացույցի համար, եթե այդ ժամանակահատվածում էական փոփոխություններ չեն պլանավորվել:

4.2.1. Միջազգային փոխադրումներ

2024 թվականի միջազգային փոխադրումների իրականացման համար հայտ ներկայացնող Փոխադրողները պետք է հաշվի առնեն, որ միջազգային սահմանահատման (стыковой) կետերով երթևեկության չափերը որոշվում են ԱՊՀ մասնակից պետությունների երկաթուղային վարչությունների լիազոր ներկայացուցիչների 2024/2025 թվականների գնացքների ձևավորման պլանի մշակման տարեկան խորհրդակցության ընթացքում:

4.3. Թողունակության հատկացման գործընթացը

Հզորությունների բաշխման գործընթացը բաղկացած է հետևյալ շրջափուլերից՝

- տարեկան ժամանակացույցի հզորությունների բաշխման շրջափուլ, ներառյալ մշակման նախնական փուլը, որտեղ ուսումնասիրվում են հզորությունների ապագա բաշխման հնարավոր տարբերակները,
- հատուկ հայտով հզորությունների բաշխման շրջափուլ:

Հայտը ստանալուց հետո «ՀԿԵ» ՓԲԸ-ն ստուգում է հայտատուի կարգավիճակը և տվյալների ամբողջականությունը:

«ՀԿԵ» ՓԲԸ-ն կարող է մերժել հայտը հետևյալ պատճառներով՝

- հայտատուն չունի համապատասխան լիազորություններ,
- հայտը լրիվ չէ,
- հայտը պարունակում է իրար հակասող տարրեր,
- հայտը գերազանցում է ենթակառուցվածքի օգտագործման հնարավորությունների ներուժը:

4.3.1. Չօգտագործված հզորություններ

Եթե Փոխադրողների համար բաշխված հզորությունները չօգտագործվեն կամ չեն կարող օգտագործվել, «ՀԿԵ» ՓԲԸ-ն իրավունք ունի բաշխված հզորությունները տալ այլ Փոխադրողի:

Գծերը ըստ ժամանակացույցի տրամադրվում են Փոխադրողների գնացքակազմերի առաջխաղացման համար և ներառում են դրանց բացթողման կարգավարական կառավարումը:

Կայարանների համար պլանավորվող աշխատանքների ցուցանիշները նախատեսում են յուրաքանչյուր կայարանի շահագործման աշխատանքների կառավարում, հետևյալ առաջադրանքների կատարման ապահովման համար՝

- կայարաններով վագոնների տարափոխադրման (развоз),
- բեռնման և բեռնաթափման,
- բաժանմունքում վագոնների գնտվելու ժամանակի կրճատմանն ուղղված տեղային աշխատանքի օպտիմալացման, քարշային և բեռնման ռեսուրսների ռացիոնալ օգտագործման ապահովման,
- վագոնների բեռնատարողության և տեղատարողության (вместимость) առավելագույն օգտագործման,
- շահագործման ծախսերի կրճատման նպատակով տնտեսապես արդյունավետ ուղղությունների ընտրության,
- վառելիքա-էներգետիկ ռեսուրսների տնտեսման, շահույթ ստանալու և բեռների մատակարարման ժամկետների արագացման:

4.3.2. Երկաթուղային ենթակառուցվածքի բաշխման ծրագիրը

«ՀԿԵ» ՓԲԸ-ն համատեղ այլ երկրների ենթակառուցվածքի կառավարիչ կազմակերպությունների հետ մասնակցում է միջազգային հաղորդակցության ուղիների համաձայնեցմանը մինչև երթևեկության նոր ժամանակացույցի քննարկումը:

4.3.3. Շարժակազմի երթևեկության համակարգումը

«ՀԿԵ» ՓԲԸ-ն համակարգում է ընդհանուր օգտագործման երկաթուղային ենթակառուցվածքով գնացքների երթևեկությունը, ներառյալ ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղային ենթակառուցվածքի ուղիներին միացումը:

4.3.4. Ենթակառուցվածքի թողունակության վերլուծությունը

«ՀԿԵ» ՓԲԸ-ն պարբերաբար անց է կացնում ենթակառուցվածքի թողունակության վերլուծություն՝ սահմանելու համար այն սահմանափակումները, որոնք հնարավորություն չեն տալիս ամբողջությամբ բավարարել հայտերը:

Նշված վերլուծությունն իրականացվում է ենթակառուցվաքի գերբեռնվածության հաստատման պահից 6 ամսվա ընթացքում և սահմանում է դրա պատճառները, ինչպես նաև խնդրի լուծմանն ուղղված անհրաժեշտ միջոցները (շրջուղիներ, տեխնիկական արագության փոփոխություններ, ենթակառուցվածքի բարելավում և այլն):

Թողունակության վերլուծության ավարտից հետո, «ՀԿԵ» ՓԲԸ-ն ընդունում է Փոխադրողների հետ բանակցություններից հետո մշակված թողունակության ավելացման ծրագիրը:

4.3.5. Ենթակառուցվածքի թողունակությունն ըստ ժամանակացույցի երկաթուղային ցանցի զննության և վերանորոգման ժամանակ

Պլանավորման ժամանակ «ՀԿԵ» ՓԲԸ-ն պահում է ենթակառուցվածքի այն թողունակությունը, որն անհրաժեշտ է վերանորոգման աշխատանքներ (հաղորդակցության ուղիներ, երթևեկության սխեմայում ազատ միջակայքեր և այլն) կատարելու համար:

4.3.6. Հատուկ միջոցներ տրանսպորտի երթևեկության կանգի դեպքում

Տեխնիկական անսարքության կամ երկաթուղային վթարի հետևանքով առաջացած երկաթուղու վրա շարժակազմի երթևեկության կանգի դեպքում «ՀԿԵ» ՓԲԸ-ն ձեռնարկում է բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են նորմալ երթևեկությունը վերականգնելու համար:

«ՀԿԵ» ՓԲԸ-ի հսկողությունից դուրս և երկաթուղային երթևեկությունը սահմանափակող կամ փակող ֆորս-մաժորային հանգամանքների, տարերային աղետների և այլ օբյեկտիվ իրավիճակների վերաբերյալ «ՀԿԵ» ՓԲԸ-ն տեղեկացնում է Լիազոր մարմնին և Փոխադրողներին: Այդ դեպքերում «ՀԿԵ» ՓԲԸ-ն ձեռնարկում է բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են երթևեկությունը վերսկսելու համար, իսկ Փոխադրողները կազմակերպում և իրենց վրա են վերցնում այդ ուղղությամբ կատարված ծախսերը (ներառյալ ԵԵՕՎ):

ԳԼՈՒԽ V.
5. <u>Պայմանագրային ծառայություններ</u>

5.1. Ենթակառուցվածքի օգտագործման նվազագույն փաթեթը

Հասանելիության պայմանագրին համապատասխան, «ՀԿԵ» ՓԲԸ-ն Փոխադրողին մատուցում է հետևյալ ծառայությունները՝

- Փոխադրողին ընդհանուր օգտագործման երկաթուղային ենթակառուցվածքի օգտագործման իրավունքի տրամադրում, ուղևորների, բեռների, ուղեբեռի փոխադրումների իրականացման համար այլ անհրաժեշտ ենթակառուցվածքի օբյեկտների տրամադրում,

ներառյալ Փոխադրողի գնացքի բացթողման երթուղու սահմանումը և համաձայնեցումը՝ ելնելով գնացքի մեկնման երկաթուղային կայարանի և գնացքի նշանակման վայրի երկաթուղային կայարանի միջև ամենակարճ տարածությունից,

- Ենթակառուցվածքի մաս հանդիսացող ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերում Փոխադրողին պատկանող կամ նրա կողմից փոխադրումների իրականացման համար ներգրավված երկաթուղային շարժակազմի (այսուհետ՝ Փոխադրողի երկաթուղային շարժակազմ) հասանելիության ապահովումը, այդ թվում հետևյալ աշխատանքների (գործառնությունների) կատարումը՝

1. Փոխադրողի երկաթուղային շարժակազմի ընդունման և ընդհանուր օգտագործման երկաթուղային գծեր (երկաթուղային գծերից) փոխանցման իրականացումը՝ Փոխադրողի մոտ տվյալ գործառնությունները ինքնուրույն իրականացնելու հնարավորության բացակայության դեպքում,

2. Երկաթուղային կայարանների տեխնիկական միջոցների օգտագործմամբ Փոխադրողի գնացքի և երկաթուղային շարժակազմի կազմավորումն ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերի վրա՝ Փոխադրողի մոտ այդպիսի կազմավորում ինքնուրույն իրականացնելու հնարավորության բացակայության դեպքում:

- Գնացքների երթևեկության կառավարումը, ներառյալ հետևյալ աշխատանքների (գործառնությունների) կատարումը՝

1. Այլ ենթակառուցվածքների սեփականատերերի, օտարերկրյա պետությունների երկաթուղիների և այլ տեսակի տրանսպորտի կազմակերպությունների հետ փոխադրումների իրականացման տեխնիկական և տեխնոլոգիական հնարավորությունների համաձայնեցումը,

2. Փոխադրողի երկաթուղային շարժակազմ՝ ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերով առաջխաղացման կազմակերպումը՝ կոնկրետ փոխադրման համար նախատեսված պայմանագրի պայմաններին համապատասխան,

3. Փոխադրումների կարգավարական կառավարումը,

4. Փոխադրողի երկաթուղային շարժակազմի տեխնիկական վիճակի հսկողությունը (զննություն),

5. Փոխադրողի երկաթուղային շարժակազմի սպասարկումը ընթացքի ժամանակ (առանց անջատման վերանորոգում)՝ Փոխդրողի մոտ այդպիսի վերանորոգում ինքնուրույն իրականացնելու հնարավորության բացակայության դեպքում,

6. Փոխադրողի հայցով Փոխադրողի երկաթուղային շարժակազմի երթևեկության կամ գտնվելու վայրի մասին տեղեկատվության տրամադրումը,

7. Երկաթուղային քարշային շարժակազմի էլեկտրամատակարարումը ենթակառուցվածքի էլեկտրաֆիկացված տեղամասերում՝ Փոխադրողի կողմից փոխադրումների իրականացման ընթացքում էլեկտրական քարշի օգտագործման դեպքում,

8. Երկաթուղային կայարաններում տեսակավորման և մաննրային աշխատանքների իրականացումը փոխադրման իրականացման ընթացքում՝ Փոխադրողի մոտ այդպիսի աշխատանքներն ինքնուրույն իրականացնելու հնարավորության բացակայության դեպքում (Հավելված 11 Սակագնային քաղաքականություն):

5.2. Լրացուցիչ ծառայությունների մատուցումը

«ՀԿԵ» ՓԲԸ-ի կողմից Փոխադրողներին լրացուցիչ ծառայությունները մատուցվում են պայմանագրային հիմունքներով:

ԳԼՈՒԽ VI.
6. Երկաթուղային ենթակառուցվածքի օգտագործման համար վճարը

6.1. Վճարի հաշվարկման սկզբունքները

Երկաթուղային ենթակառուցվածքի հասանելիությունը ստանալու համար, Փոխադրողները պետք է կատարեն երկաթուղային ենթակառուցվածքի օգտագործման համար վճար (ԵԵՕՎ):

ԵԵՕՎ վճարվում է «ՀԿԵ» ՓԲԸ-ին, որը «ՀԿԵ» ՓԲԸ օգտագործում է իր գործունեության ֆինանսավորման համար:

ԵԵՕՎ գանձվում է՝

- ծառայությունների նվազագույն փաթեթի դիմաց,
- երկաթուղային ցանցի լրացուցիչ ծառայությունների հասանելիության համար:

6.2. Սակագներ

Երկաթուղային ենթակառուցվածքի հասանելիության տրամադրման համար վճարի գանձման ընդհանուր կարգը սահմանված է «Երկաթուղային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածով, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 24.12.2008 թվականի «ՀԿԵ» ՓԲԸ-ն ենթակառուցվածքի օգտագործման վճարի սահմանման և վերանայման կարգի մասին» թիվ 731-Ա որոշմամբ (17.04.2013 թվականի փոփոխություններով) և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 05.12.2012 թվականի «ՀԿԵ» ՓԲԸ-ն ենթակառուցվածքի օգտագործման վճարի հաշվարկման մեթոդիկան հաստատելու մասին» թիվ 501-Ա որոշմամբ, Կոնցեսիոն պայմանագրով:

ԵԵՕՎ հաշվարկվում և վճարվում է «ՀԿԵ» ՓԲԸ-ի օգտին:

Վերոնշյալ սկզբունքներին համապատասխան, անկախ գնացքի քաշից ԵԵՕՎ հավասարեցվում է երկաթուղային ենթակառուցվածքով շարժվող յուրաքանչյուր գնացքի համար:

«ՀԿԵ» ՓԲԸ-ն կարող է ներդնել զեղչերի համակարգ երթևեկության որոշակի տեղամասերում ենթակառուցվածքի բոլոր օգտագործողների համար սահմանափակ ժամանակով՝ երկաթուղային ոլորտում նոր ծառայությունների մատուցման խթանման նպատակով, կամ իրենց թողունակությունից ցածր շահագործվող երկաթուղային գծերում:

«ՀԿԵ» ՓԲԸ-ն կիրառում է զեղչերի միևնույն համակարգերը համանման ծառայությունների համար:

«ՀԿԵ» ՓԲԸ-ն կարող է կիրառել Կարգավորող հանձնաժողովի կողմից սահմանված վճարից ավելի ցածր վճար, բացառելով գնային խտրականությունը: Առավել ցածր վճարի

կիրառման արդյունքում ենթակառուցվածքի կառավարչի կողմից կրած հավանական վնասը Կարգավորող հանձնաժողովի կողմից չի փոխհատուցվում:

ԵԵՕՎ վճարվում է Հասանելիության տրամադրման մասին պայմանագրում սահմանված պայմաններին և սահմանային ժամկետներին համապատասխան:

«ՀԿԵ» ՓԲԸ-ն կարող է կասեցնել հասանելիությունը ենթակառուցվածքի նկատմամբ այն Փոխադրողների համար, որոնք չեն կատարել վճարում՝ Հասանելիության պայմանագրով սահմանված վճարման ամսաթվից 3 աշխատանքային օրվա ընթացքում: Այդ դեպքում, «ՀԿԵ» ՓԲԸ-ի առաջարկությամբ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը կարող է կասեցնել կամ հետ կանչել համապատասխան Փոխադրողի լիցենզիան:

Օգտագործման համար վճարը կարող է վերանայվել ենթակառուցվածքի կառավարչի նախաձեռնությամբ:

Լիազոր մարմնի առաջարկությամբ Կարգավորող հանձնաժողովը կարող է վերանայել օգտագործման վճարը և սահմանել նոր վճար՝ իր կողմից սահմանված ընթացակարգին համապատասխան:

6.3. Ֆինանսական երաշխիքներ

«ՀԿԵ» ՓԲԸ-ի առջև իրենց ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով, Փոխադրողները, Հասանելիության տրամադրման մասին պայմանագրի կնքման ամսաթվից 30 օրվա ընթացքում, ներկայացնում են երաշխիք՝ առնվազն մեկ ամսվա փոխադրումների համար նախատեսված ԵԵՕՎ չափով: Երաշխիքը պետք է ներկայացվի հետևյալ ձևերից մեկով՝

- երաշխիքային դեպոզիտ «ՀԿԵ» ՓԲԸ-ի բանկային հաշվին,
- բանկի երաշխիքային նամակ,
- բանկի կողմից երաշխավորված հասարակ մուրհակ,
- որևէ հիմնական միջոցի (անշարժ գույքի, վագոնների և/կամ լոկոմոտիվների) գրավ: